ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«19» հոկտեմբեր 2014թ. N200

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 8-Ի N 238 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Արտաշարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2014 թվականի հոկտեմբերի 6-ի, «Ապագայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2014 թվականի հոկտեմբերի 6-ի, «Թաիրովի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2014 հոկտեմբերի 9-ի N89, «Մուսալեռի Ֆրանց Վերֆելի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2014 թվականի հոկտեմբերի 6-ի N106 գրությունները

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2010 թվականի հուլիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների կազմերը հաստատելու մասին» N 238 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1)որոշմամբ հաստատված հավելվածում՝

ա.« «Արտաշարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմում «8.Կարապետյան Էլմիրա - ծնող» բառերը փոխարինել «8.Հովակիմյան Արմինե - ծնող» բառերով,

բ. «Ապագայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմում «7.Հարություն Վարդանյան - ծնող» բառերը փոխարինել «7.Ղազարյան Արթուր - ծնող» բառերով, «8.Խաչատրյան Քաջիկ - ծնող» բառերը փոխարինել «8.Մանուկյան Կարինե - ծնող» բառերով,

գ. «Թաիրովի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմում «8.Մահտեսյան Նարինե– ծնող» բառերը փոխարինել «8.Ոսկանյան Մարիամ - ծնող» բառերով,

դ. «Մուսալեռի Ֆրանց Վերֆելի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմում «5.Թևանյան Սուսաննա - ուսուցիչ» բառերը փոխարինել «5.Կարապետյան Գայանե - ուսուցիչ» բառերով,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ